

**ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀՐԱՆՈՒՇ ԺՈՐԱՅԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԻ՝ ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԻ  
ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ**

Ժ. 02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»  
մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2018**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Լ.Մ. Խաչատրյան

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Վ.Վ. Մադոյան

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Լ.Հ. Ֆլոյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. հունիսի 4-ին՝ ժամը 15:00, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորիչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար բանասիրական  
գիտությունների թեկնածու դոցենտ  
Ն.Մ. Սիմոնյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Տեքստի կապակցման գործում գիտակցության և կանխենթադրության հենքի (ԿՀ) գործառնման մեխանիզմների քննությունը պահանջում է մշակել հետազոտության նոր հայեցակետ, իրականացնել խոր և մանրակրկիտ հետազոտական աշխատանք, որով և պայմանավորված է ընտրված թեմայի **արդիականությունը:** Բացի այդ, ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև խոսույթի և տեքստի կառուցվածքի և բովանդակության ներհայեցական համալիր ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Կապակցված տեքստը՝ որպես խոսող անհատի լեզվամտածական գործունեության վերջնարդյունք, նրա ԿՀ-ի բաղադրիչ միավորների փոխհամաձայնեցված աշխատանքի արգասիքն է, որն էլ դարձրել ենք ատենախոսության քննության առարկա: Այս խնդիրն առ այսօր հատուկ քննության չի արժանացել, սակայն այն անհրաժեշտ է կանխենթադրույթի միջոցով, ավելի ստույգ՝ ԿՀ-ի միջոցով տեքստի կապակցման և հասցեատիրոջ կողմից այն ընկալելու գիտակցական և լեզվամտածական գործընթացներն ուսումնասիրելու և նկարագրելու համար: Սրանով է պայմանավորված հետազոտության գործնական անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից տեղին է մեջբերել Ռ. Յակոբսոնի տեսակետը, որում ասվում էր, որ պետք է քննել և՛ ծածկագիրը, այսինքն՝ լեզուն, և՛ համատեքստը<sup>1</sup>, որն, ըստ Ռ. Յակոբսոնի, ներառում է նաև մշակության բաղադրիչը:

Հետևաբար, ատենախոսությունը նվիրված է տեքստի կապակցմանը և ընկալմանը երկու տեսանկյունից, այն է՝ ուսումնասիրել և բացահայտել տեքստի կապակցումը մի կողմից ԿՀ-ի ընդհանրական լեզվագիտակցական կառույցների, իսկ մյուս կողմից՝ մշակութահեն, մշակութանիշ լեզվագիտակցական կառույցների միջոցով:

Ուսումնասիրության **առարկան** է տեքստի կապակցումը խոսող անհատի ԿՀ-ի և դրա բաղադրիչ կանխենթադրության կառույցների (գոյաբանական և լեզվական ճանաչողական կառույցներ, նախադիպային իրողություններ, ֆրեյմեր և կարծրատիպեր) միջոցով, այն գործընթացները, որոնք մասնակցում են ԿՀ-ի և դրա կանխենթադրության, կառուցվածքային միավորների ձևավորմանը մարդու գիտակցության մեջ, այն գործընթացները, որոնք ԿՀ-ի միջոցով նախ կառու-

<sup>1</sup> Якобсон Р.О., Язык и бессознательное: Работы разных лет, М.: Гнозис, 1996, с. 33.

ցում են ամբողջական խոսույթ, ապա դրա հիման վրա ստեղծում ներկապակցված տեքստ, տեքստի ամբողջականությունը դրա խոսույթի մակարդակում և ներկապակցումը տարբեր լեզվական ճանաչողական կառույցների միջոցով, տեքստի ընկալումը հասցեատիրոջ կողմից:

Հետազատության **ողորպն** է կապակցված տեքստը՝ որպես համապարփակ երևույթ և խոսող անհատի մշակութափեսն լեզվագիտակցության բովանդակությամբ՝ ԿՀ-ի վերջնարդյունք:

Աշխատանքի **նպատակն** է պարզել՝ ինչպես է մարդու գիտակցության մեջ կազմավորվում ԿՀ-ը՝ աշխարհի պատկերը և աշխարհի լեզվական պատկերը, ինչ կառուցվածքային ձևակերպումներ են ստանում գիտելիքներն այդտեղ, և ինչպես է ԿՀ-ն իր բաղադրիչ միավորներով (գոյաբանական և լեզվական ճանաչողական կառույցներ, նախադիպային իրողություններ, ֆրեյմեր և կարծրատիպեր) նախ կառուցում խոսույթը, ապա դրա հիման վրա ներկապակցում տեքստը: Այսինքն՝ փորձ ենք կատարելու ներթափանցել մարդու գիտակցության մեջ գոյացող ԿՀ և պարզել դրա ձևավորման շարժառիթներն ու գործընթացները և գործառման մեխանիզմները, որոնց վերջնական նպատակը և վերջնարդյունքը ամբողջական խոսույթ և ներկապակցված տեքստ ստեղծելն է: Փաստորեն՝ ԿՀ-ը հանդես է գալիս որպես աշխարհի անհատական տեսլական, որը թելադրում է խոսող անհատին մտածելու և հաղորդակցվելու՝ կապակցված տեքստ կազմելու և հասցեագրողի տեքստը հասկանալու կամ չհասկանալու գիտելիքային «ոսպնյակ»: Այլ կերպ ասած՝ առենախոսության նպատակն է պատասխանել հետևյալ հարցերին. *ի՞նչ է տեքստը, ո՞վ է խոսողը, այսինքն՝ ո՞վ է խոսող անհատը, ինչպե՞ս է խոսող անհատը ձևավորում իր լեզվաճանաչողական ԿՀ-ը, ինչպե՞ս է ԿՀ-ը նպաստում տեքստի ձևավորմանը, ինչպե՞ս է ԿՀ-ը պայմանավորում տեքստի ընդհանուր լեզվաճանաչողական, հոգելեզվաբանական և էթնոլեզվաբանական էությունը և ինչպե՞ս է ընդհանրապես կանխենթադրույթը լայն իմաստով ձևավորում խոսույթը և ներկապակցում տեքստը:*

Աշխատանքի նպատակը պայմանավորում է հետազոտության **խնդիրները**.

1. Վեր հանել և սահմանել խոսող անհատի ԿՀ-ի կառուցվածքը:
2. Վեր հանել ԿՀ-ի ձևավորման անհատական և ազգային նախադրյալները:
3. Վեր հանել և սահմանել տեքստի կառուցվածքը, դրա ձևավորման և կապակցման օրինաչափությունները՝ ելնելով խոսող անհատի (լեզվաճանաչողական) ԿՀ-ից:
4. Վեր հանել և սահմանել խոսող անհատի ԿՀ-ի ձևավորման օրինաչափությամբ:

յունները և դրա բաղադրիչ միավորները:

5. Վեր հանել դրանց անմիջական դերը և ազդեցությունը խոսքի և հետևաբար տեքստի ձևավորման վրա:
6. Վեր հանել և նկարագրել տեքստի ձևավորման կաղապարը՝ ելնելով խոսող անհատի ԿՀ-ից:
7. Դիտարկել և սահմանել խոսույթը և տեքստը՝ ելնելով մեր աշխատանքի նպատակից:
8. Դիտարկել և սահմանել տեքստի ընկալումը՝ ելնելով հասցեատիրոջ ԿՀ-ից:
9. Վեր հանել և սահմանել այն երևույթները, որոնք ձևավորում են խոսող անհատի ԿՀ-ը, որը և ապահովում է արդյունավետ հաղորդակցում՝ տեքստի ձևավորում: Վեր հանել այդ երևույթների կառուցվածքային էությունը:
10. Վեր հանել և սահմանել ԿՀ-ի լեզվաճանաչողական բաղադրատարրերը՝ ցույց տալով դրանց փոխկապակցված և փոխապայմանավորող էությունը:
11. Վեր հանել կանխենթադրույթի միջոցով խոսույթի ամբողջականության (когерентность, coherence) և տեքստի ներկապակցման (когезия, cohesion) ընդհանուր օրինաչափությունները:

Հետազոտության **տեսական-մեթոդաբանական հիմքն** են դարձել տեքստի կապակցման և կանխենթադրույթի խնդիրներով զբաղվող գիտնականների ուսումնասիրությունները [Беллерт<sup>2</sup>, Лисоченко<sup>3</sup>, Арутюнова<sup>4</sup>, Колшанский<sup>5</sup>, Звегинцев<sup>6</sup>, Валгина<sup>7</sup>, Карасик<sup>8</sup>, Караулов<sup>9</sup>, Пешкова<sup>10,11,12</sup>, Уфимцева<sup>13,14</sup>, Мака-

---

<sup>2</sup> Беллерт И., Об одном условии связности текста // Новое в зарубежной лингвистике, М.: Наука, 1978, № 8. С. 72-207.

<sup>3</sup> Лисоченко Л.В., Высказывания с имплицитной семантикой, Ростов-на-Дону: Издательство Рост. университета, 1992. – 160 с.

<sup>4</sup> Арутюнова Н.Д., Предложение и его смысл: Логико-грамматические проблемы, 5-е изд., М.: Издательство ЛКИ, 2007. – 384 с.

<sup>5</sup> Колшанский Г.В., О языковом механизме порождения текста // Вопросы языкознания, М.: Наука, 1983, №3. С. 44-51.

<sup>6</sup> Звегинцев В.А., Предложение и его отношение к языку и речи, М.: Издательство МГУ, 2001. – 312 с.

<sup>7</sup> Валгина Н.С., Теория текста, М.: Логос, 2003. – 173 с.

<sup>8</sup> Карасик В.И., О категориях дискурса // Языковая личность: социолингвистические и эмотивные аспекты, Волгоград – Саратов: Перемена, 1998. С. 185-197.

<sup>9</sup> Караулов Ю.Н., Русский язык и языковая личность, отв. ред. Д.Н. Шмелев, АН СССР, отделение литературы и языка, М.: Наука, 1987. – 263 с.

<sup>10</sup> Пешкова Н.П., Экспериментальное исследование пресуппозиции как характеристики типологической системы текста // Лингвометодические проблемы обучения иностранным

ров<sup>15</sup>, Гальперин<sup>16</sup>, Кубрякова<sup>17</sup>, Москальская<sup>18</sup>, Stalnaker<sup>19</sup>, Lakoff<sup>20</sup> և ուրիշներ]: Մարդու դերը լեզվի ճանաչման գործընթացում և ընդհանրապես *մարդը լեզվում* գաղափարն առանցքային է մեր ուսումնասիրության մեջ: Հետևաբար՝ հատուկ ուշադրության ենք արժանացրել տեքստի կառուցման մարդակենտրոն և ճանաչողական գործոնները, մի շարք հակադրությունների էական հատկանիշները, ինչպիսիք են լեզու-մտածողություն, լեզու-խոսք, լեզու-հասարակություն, խոսող-լսող, խոսույթ-տեքստ: Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** մարդակենտրոնության սկզբունքն է, որը թույլ է տալիս դիտարկել լեզուն որպես նշանագիտական համակարգ, որի վերաբերության հիմնական հարթակն անմիջականորեն խոսող անհատն է և նրա ԿՀ-ը: Կանխենթադրույթի միջոցով տեքստի կապակցման մարդակենտրոն մոտեցումը թույլ է տալիս նկարագրել կապակցված տեքստը մարդու գիտակցության բովանդակության՝ ԿՀ-ի միջոցով լայն իմաստով: Ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառել ենք հետևյալ **մեթոդները՝**

- լեզվաբանական զննման մեթոդը, որի նպատակն է վեր հանել քննվող երևույթների լեզվական առանձնահատկությունները,
- նյութի ընտրությունը, մշակումը և քննությունը՝ ըստ կառուցվածքի և բովան-

---

языкам в вузе, Уфа: Издательство Восточного университета, 2002. С. 89-92.

<sup>11</sup> Пешкова Н.П., Смысл текста и его многозначность // С любовью к тексту, Уфа: Издательство Восточного университета, 2006. С. 39-50.

<sup>12</sup> Пешкова Н.П., Имплицитность как онтологическое свойство текста // Семантические, грамматические и когнитивные категории языка, Уфа, Гилем, 2007. С. 32-37.

<sup>13</sup> Уфимцева Н.В., Языковое сознание: динамика и вариативность, М.: ИЯ РАН, 2011. – 252 с.

<sup>14</sup> Уфимцева Н.В., Сопоставительный анализ языкового сознания: этнические и культурные стереотипы // Этнопсихоллингвистические аспекты преподавания иностранных языков, М.: Наука, 1996b. С. 90-96.

<sup>15</sup> Макаров М.Л., Интерпретативный анализ дискурса в малой группе, Тверь: Гнозис, 1998. – 199 с.

<sup>16</sup> Гальперин И.Р., Текст как объект лингвистического исследования, М.: Наука, 1981. – 138 с.

<sup>17</sup> Кубрякова Е.С., О тексте и критериях его определения // Текст. Структура и семантика, т.1, М.: Наука, 2001. С. 72-81.

<sup>18</sup> Москальская О.И., Грамматика текста, М.: Высшая школа, 1981. – 183 с.

<sup>19</sup> Stalnaker R., Presuppositions // Journal of Philosophical Logic, 1973, № 2. P. 447-457.

<sup>20</sup> Lakoff G., Classifiers as a Reflection of Mind // Noun classes and categorization: Proceedings of a Symposium on categorization and noun classification, Eugene, Oregon: October 1983, Craig C. (ed.), Amsterdam; Philadelphia: John Benjamins Publishing, 1986. P. 13-51.

դակության,

- ներհայեցումը՝ որպես լեզվաբանական փորձ,
- համեմատական վերլուծության մեթոդները,
- իմաստի քննության ճանաչողական-խոսույթային վերլուծության մեթոդը, որի նպատակն է վեր հանել խոսույթի և տեքստի կառուցման/ ընկալման մեխանիզմները ԿՀ-ի տեսանկյունից,
- իմաստաճանաչողական վերլուծության և կադապարման մեթոդը:

Ատենախոսության գիտական **նորույթն** այն է, որ առաջին անգամ իրականացվում է կանխենթադրույթի միջոցով տեքստի կապակցման ուսումնասիրություն, որի արդյուքում առաջարկվում է տեքստի կապակցման նոր հայեցակերպ՝ դիտարկելով կապակցված տեքստը որպես մարդու ԿՀ-ի բովանդակության և գործառնման անմիջական արգասիք: Առաջին անգամ մեր կողմից լեզվաբանության մեջ ներմուծվել, սահմանվել և նկարագրվել է խոսող անհատի ԿՀ-ը:

Հետազոտության **պեսական արժեքը** կանխենթադրույթի միջոցով տեքստի ներկապակցման նոր հայեցակերպի մշակումն է, որն առ այսօր չի իրականացվել լեզվաբանական հետազոտություններում: Այն առաջարկում է խոսույթի ամբողջականության և տեքստի ներկապակցման մարդակենտրոն մոտեցում՝ հիմնված խոսող անհատի ԿՀ-ի բովանդակության և գործառնման վրա: Աշխատանքի տեսական արժեքը խոսող անհատի ԿՀ-ի ձևավորման, կառուցվածքի, գործառնման բազմակողմանի նկարագրումն է: ԿՀ-ի գործառնման վերջնարդյունքը կապակցված տեքստն է: Փաստորեն՝ համաձայն հետազոտության արդյունքների՝ տեքստը մարդակենտրոն, ճանաչողական, լեզվամտաձական կառույց է, որի թե՛ կառուցումը, թե՛ ընկալումն իրագործվում է հաղորդակցվողների ԿՀ-երի միջոցով:

Աշխատանքում հստակ տարանջատել, նկարագրել և սահմանել ենք մի շարք հասկացություններ, ինչպիսիք են տեքստը և խոսույթը, խոսույթը և լեզվական գործունեությունը, խոսույթը և ներքին խոսքը, առաջարկել ենք տեքստի կառուցման և ընկալման խոսույթային մեկնություն, որն ամբողջովին պայմանավորված է հաղորդակցվողների ԿՀ-երի բովանդակությամբ և գործառնմամբ:

Հետազոտության արդյունքները կարող են **գործնական կիրառություն** ունենալ մի շարք տեսական դասընթացների ժամանակ, ինչպիսիք են տեքստի տեսությունը, խոսույթի վերլուծությունը, գործաբանությունը, իմաստաբանությունը, հոգելեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը և այլն: Ատենախոսության նյութը կարող է հիմք դառնալ մի շարք հա-

տուկ դասընթացների և սեմինարների, ինչպես նաև տեքստի լեզվաբանության և լեզվամտածական գործունեության մասին ուսումնական ձեռնարկների համար:

**Հեղափոխության փաստական նյութը** հայերեն, անգլերեն և ռուսերեն տարաբնույթ տեքստեր են, այդ թվում՝

1. տեքստեր գեղարվեստական գրականությունից [Հ. Թումանյան, Բաֆֆի, Ե. Չարենց, Հ. Մաթևոսյան, Պ. Սևակ, Իսկր Ապեր, Բ. Акунин, А. Ахматова, М. Цветаева, Л. Толстой, Ю. Рыбчинский, А. Пушкин, W. Saroyan, S. Hill, J. Keats, W. Thackeray, J. Austen, J. Joyce, S. Maugham և ուրիշներ],
2. մամլո տեքստեր [in.am, panorama.am, armlur.am, aysor.am, aravot.am, hrarak.am, news.am, ani.ankakh.com, correspondent.net, izvestia.ru, lausanneworldpulse.com, reuters.com և այլն],
3. հանպատրաստից երկխոսական տեքստեր (զննման կամ հարցարանների բանավոր լրացման, հարցազրույցով ստացված տեքստեր),
4. երկխոսական տեքստեր գեղարվեստական գրականությունից [Հ. Թումանյան, Բաֆֆի, Հ. Մաթևոսյան, Բ. Акунин, Л. Толстой, W. Thackeray],
5. գովազդի տեքստեր [1 канал, BRIDGE TV],
6. գիտահանրամատչելի տեքստեր [J. Pustejovsky]:

**Աշխարհնքի փորձարկումը.** Հետազոտության հիմնադրույթները հրապարակվել են հանրապետական և արտասահմանյան համալսարանների և գիտական կազմակերպությունների գրախոսվող պարբերական հանդեսներում ընդհանուր ծավալով մոտ 30 մամուլ, ինչպես նաև ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

**Արենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը** պայմանավորված են դրա թեմայով, արտացոլում են հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, յոթ գլխից, որոնցից յուրաքանչյուրն ամփոփվում է հակիրճ եզրակացություններով, գրականության ցանկից, աղյուսակներ պարունակող հավելվածից և աշխատանքում ընդունված հապավումների ցանկից:



## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության մեջ** համառոտ շարադրվել է հարցի պատմությունը: Անդրադարձ է եղել այն հեղինակներին, որոնք ուսումնասիրել են տեքստը և կանխենթադրույթը, և որոնք աշխատանքները հիմք են ծառայել մեր ատենախոսության համար, ինչպես նաև այն նոր գաղափարներին և հասկացություններին, որոնք մենք ենք ներմուծել և դարձրել մեր աշխատանքի անկյունաքար:

### **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՏԵՔՍՏԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՍՈՒՅԹԻ ԲԱՂԱԴԻՐԻՉ: ՏԵՔՍՏԻ ԵՎ ԽՈՍՈՒՅԹԻ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Առաջին գլուխը բաղկացած է չորս բաժնից: Այստեղ քննվում են տեքստ և խոսույթ հասկացությունները, իրականացվում են դրանց համալիր ուսումնասիրություն, համադրություն, ուրվագծվում են դրանց առանձնահատկությունները՝ հիմնված ոլորտի առաջադեմ գիտնականների հայեցակետերի վրա, ապա ներկայացվում է մեր ըմբռնումը դրանցից յուրաքանչյուրի մասին:

1.1. բաժնում դիտարկել ենք խոսույթ հասկացությունն ընդհանրապես, քննության ենք առել դրա սահմանումները լեզվաբանների և հարակից գիտությունների հետազոտողների կողմից [Хабермас<sup>21</sup>, Фуко<sup>22</sup>, Филлипс, Йоргенсен<sup>23</sup>, Греймас, Курте<sup>24</sup>, Harris<sup>25</sup>, Sacks<sup>26</sup>], ներկայացրել ենք խոսույթի մեր հայեցակետը, որը հիմնականում հարում է Տ. վան Դեյքի<sup>27</sup>, Ա. Կիրրիկի<sup>28</sup>, Յու. Կարաուլո-

---

<sup>21</sup> Хабермас Ю., Философский дискурс о модерне, пер. с нем., М.: Весь Мир, 2003. – 416 с.

<sup>22</sup> Фуко М., Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности. Работы разных лет, М.: Касталь, 1996. – 448 с.

<sup>23</sup> Филлипс Л., Йоргенсен М., Дискурс-анализ. Теория и метод, Харьков: Гуманитарный центр, 2008. – 352 с.

<sup>24</sup> Греймас А.Ж., Курте Ж., Семиотика. Объяснительный словарь теории языка // Семиотика, М.: Радуга, 1983. С. 483-550.

<sup>25</sup> Harris Z., Discourse Analysis // Language, № 28, 1952. P. 1-30.

<sup>26</sup> Sacks H., An Initial Investigation of the Usability of Conversational Data for Doing Sociology // Studies in Social Interaction (David Sudnow (ed.)), New York: Free Press, 1972. P. 31-74.

<sup>27</sup> Дейк ван Т.А., Язык. Познание. Коммуникация, пер. с англ. и ред. Ю. Караулова, В. Петрова, Благовещенск: БГК им. Н.А. Бодуэна де Куртенэ, 2000. – 308 с.

<sup>28</sup> Кибрик А.А., Когнитивные исследования по дискурсу // Вопросы языкознания, М.: Наука, 1994, № 5. С. 126-139.

վի<sup>29</sup>, Վ. Կարասիկի<sup>30</sup>, Ջ. Օգդենի<sup>31</sup>, Մ. և Թ. Բլուրների<sup>32</sup> տեսակետներին: Մեր սահմանամբ՝ *խոսույթը երկպալանային (լեզվական և արտալեզվական լայն իմաստով՝ որպես ցանկացած ճանաչողական գիտելիք՝ կանխենթադրույթ) լեզվամտածական գործունեություն է, որը կարող է լեզվականանալ հաղորդակցման ցանկացած պահի, այն և՛ գործընթաց է, և՛ դրա արգասիքը (տեքստ(եր))*: Որպես արգասիք՝ խոսույթը փոխկապակցված տեքստերի ամբողջություն է, որոնք սերել են հաղորդակցման ընթացքում: Տվյալ խոսույթի տեքստերը դրա գիտելիքային հենքն են, գիտելիքի պահպանման և հարաբերակցման միջոցը ժամանակի մեջ: Խոսույթը՝ որպես գործընթաց, լեզվամտածական գործունեություն է, որը կարող է լեզվականանալ հաղորդակցման ցանկացած պահի՝ ևս մեկով համալրելով դրա տեքստերի շարքը: Այս պահին լեզվականացած տեքստը միշտ եզակի և իրադրային է, չնայած հենվում է նույն գիտելիքի՝ խոսույթի վրա:

1.2. բաժնում քննության ենք առել խոսույթի չլեզվականացած տարբերակները, որոնց ընկալումը և խոսույթի առկայացման արդյունավետությունը հիմնված են կանխենթադրույթի վրա: Հաջող հաղորդակցվել կարելի է նույնիսկ առանց լեզվի: Այս դեպքում գործ ունենք խոսույթի չլեզվականացած տարբերակի հետ, երբ հաղորդակցումն ամբողջովին կամ մասամբ հենվում է խոսույթային տեղեկության վրա, ավելի ստույգ՝ դրա բաղադրիչ կանխենթադրույթների վրա:

1.3. բաժնում դիտարկել ենք տեքստ հասկացությունն ընդհանրապես, քննության ենք առել դրա սահմանումները լեզվաբանների և հարակից գիտությունների հետազոտողների կողմից (Лосева<sup>33</sup>, Москальская<sup>34</sup>, Николаева<sup>35</sup>, Weinrich<sup>36</sup>, Будагов<sup>37</sup>, Weinrich<sup>38</sup>, Рябцева<sup>39</sup>, Болотнова<sup>40</sup>): Այս բաժինը նվիրված է

<sup>29</sup> Караулов Ю.Н., Что же такое "языковая личность"? // Этническое и языковое само-сознание, М.: Издательство ИЯ РАН, 1995. С. 63-65.

<sup>30</sup> Карасик В.И., О категориях дискурса // Языковая личность: социолингвистические и эмотивные аспекты, Волгоград – Саратов: Перемена, 1998. С. 185-197.

<sup>31</sup> Ogden J., Health and the Construction of the Individual, Hove: Routledge & Taylor and Francis Group, 2002. – 139 p.

<sup>32</sup> Bloor M. and Bloor Th., The Practice of Critical Discourse Analysis: an Introduction. Routledge, 2013. – 207 p.

<sup>33</sup> Лосева Л.М., Как строится текст, М.: Просвещение, 1980. – 93 с.

<sup>34</sup> Москальская О.И. Грамматика текста, М.: Высшая школа, 1981. – 183 с.

<sup>35</sup> Николаева Т.М., От звука к тексту, М.: Языки русской культуры, 2000. – 680 с.

<sup>36</sup> Гак В.Г., О семантической организации текста // Лингвистика текста, материалы научной конференции, М., 1974, ч. I. С. 61-66.

<sup>37</sup> Будагов Р.А., Введение в науку о языке, М.: Добросвет, 2003. – 543 с.

<sup>38</sup> Weinrich H., Linguistik der Lüge, Heidelberg: Lambert, 1966 // Wirkendes Wort 17 (1967).

տեքստի նկարագրմանը լեզվաբանական տարբեր ուղղությունների հարացուցում: Այս բաժինն ամփոփում է նաև տեքստի մեր հայեցակետը: Մեր կարծիքով *տեքստը ստորոգական, վերարտադրելի լեզվական միավոր է, լեզվամտածողության լեզվականացած, նշանային արգասիքն է, արտացոլում է, ծածկագրում է խոսող անհատի ամբողջ ճանաչողական ԿՀ-ը լայն իմաստով, որոշակի իրավիճակի միջնորդված և լեզվականացած հակազդեցությունն/արտացոլումն է, ավարտուն և ինքնաբավ թեմատիկ, կառուցվածքային և հաղորդակցական ամբողջություն է:*

1.4. բաժինը լուսաբանում է տեքստի հիմնատարրերը, կարգերը և տարբերակիչ հատկանիշները: Մեր կատարած ուսումնասիրության ընթացքում տարանջատել ենք տեքստի երեք հիմնատարր: Դրանք են՝ արտալեզվական, ճանաչողական և (բուն) լեզվական հիմնատարրերը: Տեքստի ճանաչողական հայեցակետը պահանջում է վերանայել և վերաիմաստավորել տեքստի կարգերը: Ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից տեքստի ամբողջականությունը որոշակի խթանիչ իմաստային միավոր է՝ աշխարհի հատված, որն ամրագրելու համար ստեղծվում է տեքստը<sup>41</sup>: Ուստի՝ տեքստի հասկացութային քննությունն ուղղված է բացահայտելու և վերստեղծելու այն գիտակցական պատկերը՝ հասցեագրողի՝ աշխարհի գիտակցական հատվածը՝ ճանաչողական կանխենթադրույթը, որն ամրագրված է տվյալ տեքստով: Փաստորեն՝ տեքստի ամբողջականությունը խոսույթի ամբողջականության՝ որոշակի կուռ իմաստային տիրույթի արգասիքն է:

Ներկապակցումը տեքստի հիմնական հատկանիշն է, որի միջոցով այն կառուցվում և գործառում է որպես լեզվական միավոր: Նախադասությունների որոշակի հաջորդականություն վերածվում է տեքստի միայն ներկապակցման շնորհիվ:

---

Р. 281-283.

<sup>39</sup> Рябцева Н.К., Ментальная сфера по данным языка: Когнитивный аспект // Семиотика. Лингвистика. Поэтика. К 100-летию А.А. Реформатского, отв. ред. В.А. Виноградов, М.: Языки славянской культуры, 2004. С. 453-465.

<sup>40</sup> Болотнова Н.С., О типологии регулятивных структур в тексте как форме коммуникации // Вестник ТГПУ, Томск: Издательство ТГПУ, 2011, вып. 3. С. 34-40.

<sup>41</sup> Дымарский М.Я., Дейкитический модус текста и единицы текстообразования (на материале русского языка) // Проблемы функциональной грамматики: категории морфологии и синтаксиса в высказывании, отв. ред. А.В. Бондарко, СПб.: Наука, 2000, с. 262.

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ: ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԻ՝ ՏԵՔՍՏԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ**

Սույն գլուխը, որը նվիրված է կանխենթադրույթի և դրա տեսակների համալիր քննությանը, տեքստի և խոսույթի կառուցմանը և կապակցմանը կանխենթադրույթի տարբեր տեսակների միջոցով, բաղկացած է երկու բաժնից:

2.1. բաժինը, դիտարկում է կանխենթադրույթը որպես երևույթ, կատարում է դրա բազմակողմանի նկարագրություն և ներկայացնում դրա տեսակները՝ հիմք ընդունելով կանխենթադրույթի մասին առկա ուսումնասիրությունները: Այստեղ առաջարկել ենք կանխենթադրույթի մեր հայեցակետը. *Կանխենթադրույթը խոսող անհատի նախադիպային, ճանաչողական, աշխարհի մասին հենքային գիտելիք կամ պատկերացում է և դա պատշաճ լեզվականացնելու գիտելիք, որը նրան թույլ է տալիս արդյունավետ հաղորդակցական գործունեություն իրականացնել՝ կառուցել հաղորդակցական իրավիճակի համապետքստին համապատասխան տեքստ և ընկալել հասցեատիրոջ տեքստը*: Այս բաժնում ներկայացրել և հիմնավորել ենք նաև կանխենթադրույթի՝ մեր կողմից ընդունելի տեսակները՝ *իմաստաբանական, գործաբանական և ճանաչողական*, և մեր ուսումնասիրության անկյունաքար դարձրել վերջինը:

2.2. բաժինը առաջարկում է տեքստի և խոսույթի կապակցման և ընկալման ձևաչափ՝ հիմնված կանխենթադրույթի տարբեր տեսակների վրա:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՀԵՆՔԸ՝ ԽՈՍՈՂ ԱՆՀԱՏԻ ԼԵՃՎԱԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ**

Սույն գլուխը, որը նվիրված է խոսող անհատի, նրա ԿՀ-ի գաղափարին և դրանց բազմակողմանի քննությանը, բաղկացած է չորս բաժնից:

3.1. բաժնի թեման է խոսող անհատը և նրա լեզվագիտակցությունը, որը նրան հաղորդակցվելու հնարավորություն է տալիս: Խոսող անհատի գաղափարը մեր կողմից առաջարկված նոր հասկացություն է լեզվաբանության մեջ և առանցքային է մեր աշխատանքի շրջանակներում: Այդ երևույթի առաջադրման և հիմնավորման հարցում առաջնորդվել ենք լեզվական անհատ [Караулов<sup>42</sup>,

<sup>42</sup> Караулов Ю.Н., Русский язык и языковая личность, отв. ред. Д.Н. Шмелев, АН СССР, отделение литературы и языка, М.: Наука, 1987. – 263 с.

White<sup>43</sup>, Johnstone<sup>44</sup>, Shotter<sup>45</sup>] և խոսող մարդ [Ажеж<sup>46</sup>, Ерзинкян<sup>47</sup>] հասկացությունների մասին աշխատություններից, սակայն առաջարկել ենք դրա ամբողջովին նոր հայեցակետ: ԿՀ-ը, որը մեր հետազոտության առանցքն է, քանի որ դրա բովանդակությամբ և գործառնամբ ենք բացատրում և հիմնավորում տեքստի կապակցվածությունը, նույնպես մեր կողմից առաջարկված նոր հասկացություն է լեզվաբանության մեջ:

3.2 բաժնում քննության ենք առել աշխարհի պատկերի և աշխարհի լեզվական պատկերի ուսումնասիրությունը, քանի որ դրանք են խոսող անհատի ԿՀ-ի ձևավորման հիմքը և նրա հաղորդակցական հմտությունների ձևավորման նախապայմանը: Այս բաժնում ուսումնասիրել և նկարագրել ենք ԿՀ-ը հասարակական-մշակութային տեսանկյունից: Քանի որ մարդը վերածվում է խոսող անհատի հասարակայնացման արդյունքում, այսինքն՝ անցնում է մշակութային բովով, ապա նրա գիտակցության բովանդակությունը՝ ԿՀ-ը, հասարակական-մշակութային տեսակետից նշույթավորված է:

3.3. բաժնում քննել ենք գիտելիքը և պատկերացումը՝ որպես ԿՀ-ի տեղեկատվական նվազագույն միավորներ: Դրանք ԿՀ-ում հանդես են գալիս որպես կանխենթադրույթներ որոշակի իրողության մասին: Այս բաժնում իրականացրած մանրամասն քննությամբ նկարագրել ենք դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները: Հիմնվելով այս գլխի նախորդ բաժիններում իրականացրած ուսումնասիրության վրա՝ սույն բաժնում կատարել ենք ԿՀ-ի համալիր քննություն: *Մարդու ճանաչողական, մտահայեցական գործընթացը և դրա արգասիքը, որը սկսում է նրա ծնվելու պահից և տևում մինչև մահ, որի արդյունքում նրա գիտակցության մեջ արտացոլվում և ձևավորվում է տարաբնույթ գիտելիքների, պատկերացումների և հմտությունների համակարգ, անվանել ենք ԿՀ:* Սույն գլխի վերջին՝ 3.4. բաժինը նվիրված է ԿՀ-ի տեղեկատվական միավորների՝

---

<sup>43</sup> White H., Identity and Control: A Structural Theory of Social Action, Princeton: Princeton University Press, 1992. – 423 p.

<sup>44</sup> Johnstone B., The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics, New York: OUP, 1996. – 215 p.

<sup>45</sup> Shotter J., Gergen K., Social Construction: Knowledge, Self, Others, and Continuing the Conversation // Communication Yearbook, London: Sage, 1994, № 17. P. 3-33.

<sup>46</sup> Ажеж К., Человек говорящий. Вклад лингвистики в гуманитарные науки, М.: Едиториал УРСС, 2003. – 304.

<sup>47</sup> Ерзинкян Е.Л., Говорящий человек как языковая личность // Иностранные языки в высшей школе, 3(21), Ереван: Издательство ЕГУ, 2016. С. 76-82.

կանխենթադրույթների կրիչների քննությանը: Դրանք են գոյաբանական և լեզվական ճանաչողական կառույցները, որոնցից առաջինը ներկայացնում է ԿՀ-ի ոչ լեզվական գիտելիք, իսկ երկրորդը՝ զուտ լեզվական: Բացի այդ՝ այս բաժինում ներկայացրել ենք ԿՀ-ի մակարդակները: Դրանք են՝

1. *անհատական ԿՀ-ը* (ԱԿՀ)՝ սա այն գիտելիքների և պատկերացումների պաշարն է, որը ցանկացած խոսող անհատ ձևավորում է բացառապես իր սեփական կենսափորձի հիման վրա,
2. *ընդհանուր ԿՀ-ը* (ԸԿՀ)՝ սա այն ազգամշակութահեն գիտելիքների և պատկերացումների համակարգն է, որը պարտադիր բաղադրամաս է տվյալ լեզվամշակույթի ցանկացած միջին ներկայացուցչի ԿՀ-ում, այս գիտելիքներն ու պատկերացումներն ազգային մտածելակերպի բաղադրիչներն են:
3. *խմբային ԿՀ-ը* (ԽԿՀ)՝ սա այն գիտելիքների ու պատկերացումների համակարգն է, որոնք հայտնի են որոշակի հանրույթի անդամներին, ինչպես, օրինակ, մասնագիտական, սպորտային, կրոնական, զինվորական և այլն:

#### **ՉԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ. ԿՀ-Ի՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԼԻՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն գլուխը, որը նվիրված է ԿՀ-ի կառուցվածքային առանձնահատկություններին և գործառման օրինաչափություններին, բաղկացած է չորս բաժնից:

4.1. բաժնում քննության ենք առել նախադիպային իրողությունը՝ որպես ԿՀ-ի տեղեկատվական, կառուցվածքային միավոր՝ վեր հանելով դրա կանխենթադրութային բնույթը և տեքստի ներկայակցման ներունակությունը: ԿՀ-ը խոսող անհատի՝ աշխարհի լեզվագիտակցական պատկերն է, որը ներկայացված է նրա գիտակցության մեջ գիտելիքների և պատկերացումների ձևով: Այդ գիտելիքներն ու պատկերացումները, փաստորեն, այն իրողությունները, առարկաները, մարդիկ, իրադարձություններն են և այլն, որոնք տեղի են ունեցել կամ հանդիպել են տվյալ մարդու կյանքի ընթացքում, և որոնք դրոշմվել են նրա գիտակցության մեջ՝ որպես եղելություններ, այլ կերպ ասած՝ *նախադիպային իրողություններ*: Փաստորեն, աշխարհի՝ մեր լեզվագիտակցական պատկերը նախադիպային իրողությունների համալիր է, որոնք գործառում են որպես մեր խոսքագործունեության և դրա ընկալման հենք: 4.2. բաժնում ներկայացրել ենք նախադիպային իրողությունների դասակարգման առկա տարբերակները (Захаренко et al.<sup>48</sup>, Ka-

<sup>48</sup> Захаренко И.В., Красных В.В., Гудков Д.Б., Багаева Д.В., Прецедентное высказывание

раулов<sup>49</sup>, Сорокин<sup>50</sup>, Слышкин<sup>51</sup>, Прохоров<sup>52</sup>, Проскурина<sup>53</sup>, Балашова<sup>54</sup>) և առաջարկել մեր դասակարգումը, ինչպես նաև քննել նախադիպային իրողությունների կանխենթադրույթային բնույթը: Ըստ այդմ՝

1. *Նախադիպային իրավիճակը* (ՆԻ) ԿՀ-ի լեզվագոյաբանական ճանաչողական կառույց է, որն արտացոլվում է դրանում՝ որպես որոշակի «ձևանմուշային», «իդեալական» իրավիճակ և ներառում է այդ իրավիճակի հետ կապված որոշակի տեղեկությունների, հարանշանակությունների, տարբերակիչ հատկանիշների ամբողջություն և դրանց լեզվականացման տարբերակների շրջանակը՝ որպես կանխենթադրույթ: ՆԻ-ի նշանակիչը կարող է լինել ՆԱ-ը (օրինակ՝ *Ավարայրի ճակատամարտ, մոթ ու ցուրտ փարիներ* /հայերի համար 1990-ականները/) և ՆԱՍ-ը (օրինակ՝ «Լինե՛լ, թե չլինե՛լ, այս է խնդիրը»):
2. *Նախադիպային տեքստը* (ՆՏ) ԿՀ-ի լեզվագոյաբանական ճանաչողական կառույց է, որը լեզվամտածական գործունեության ավարտուն և ինքնաբավ արգասիք է, (բազմա)ստորոգական միավոր և բարդ նշան, որի միավորների իմաստների հանրագումարը հավասար չէ դրա ամբողջական իմաստին՝ *հիմնականխենթադրույթին* (եզրույթը մերն է): ՆՏ-ը և դրա հիմնականխենթադրույթը քաջ հայտնի է ազգային-լեզվամշակութային հանրույթի ցանկացած միջին ներկայացուցիչ: Հաղորդակցման գործընթացում կարելի է մի քանի անգամ հղում կատարել միևնույն ՆՏ-ին դրա հետ կապված ՆԱ-երի և ՆԱՍ-երի միջոցով դրա հիմնականխենթադրույթի որոշակի կանխենթադրույթ(ներ) թիրախավորելու և դրանք խոսույթ ներմուծելու համար: ՆՏ-երի շարքին են դասվում գեղարվեստական գրակա-

---

и прецедентное имя как символы прецедентных феноменов // Язык, сознание, коммуникация, вып. 1, М.: Диалог-МГУ, 1997b. С. 82-103.

<sup>49</sup> Караулов Ю.Н., Русский язык и языковая личность, отв. ред. Д.Н. Шмелев, АН СССР, отделение литературы и языка, М.: Наука, 1987. – 263 с.

<sup>50</sup> Сорокин Ю.А., Что такое прецедентный текст? // Семантика целого текста, М.: Наука, 1987. С. 144-145.

<sup>51</sup> Слышкин Г.Г., От текста к символу: лингвокультурные концепты прецедентных текстов в сознании и дискурсе, М.: Academia, 2000a. – 128 с.

<sup>52</sup> Прохоров Ю.Е., Действительность. Текст. Дискурс, М.: Флинта-Наука, 2004. – 204 с.

<sup>53</sup> Проскурина А.А., Прецедентные тексты в англоязычном юмористическом дискурсе: автореф. дисс. ... канд. филол. наук, Самара, 2004. – 18 с.

<sup>54</sup> Балашова Л.В., Метафора и языковая картина мира носителя слэнга (на материале прецедентного мира «Детство») // Вестник ИГЛУ. Сер. Филология, 2008, № 2. С. 131-136.

նության ստեղծագործությունները (օրինակ՝ «Ռոմեո և Ջուլիետ», «Սամվել»), ինչպես նաև երգերի, գովազդերի, անեկդոտների, քաղաքական հրապարակումների տեքստերը (օրինակ՝ Կրոստեր Մարթին Լյութեր Քինգի հանրահայտ «I Have a Dream» ելույթի տեքստը) և նմանօրինակ այլ տեքստեր:

3. *Նախադիպային անունը* (ՆԱ) ԿՀ-ի լեզվագոյաբանական ճանաչողական կառույց է, որը ձևի տեսակետից հատուկ անուն է և կապված է մի որևէ հայտնի տեքստի հետ, որը, որպես կանոն, ՆՏ է (օրինակ՝ «Վարդանիկ», «Սամվել», «Համլետ») կամ առնչվում է որոշակի ՆԻ-ի հետ (օրինակ՝ *Ստալին, 37 թիվ*): ՆԱ-ը բարդ կանխենթադրության նշան է, որի օգտագործման դեպքում հղում է կատարվում ոչ թե մի որոշակի վերաբերելի, այլ այդ ՆԱ-վան տարբերակիչ հատկանիշ(ներ)ին՝ որպես կանխենթադրությո՛ւմ դրանցից մեկը կամ մի քանիսը թիրախավորելու և հաղորդակցման խոսույթ ներմուծելու համար: Ի դեպ՝ ՆԱ-ը կարող է ձևական առումով կազմված լինել ինչպես մեկ, այնպես էլ երկու և ավելի բառերից (օրինակ՝ *37 թիվ, Ավարայրի ճակատամարտ, Հայկ և Քել, մութ ու ցուրտ փարիներ, Սումգայիթ, Քառօրյա պարերազմ*), որոնք սակայն մեկ իրողություն են նշանակում:

4. *Նախադիպային ասույթը* (ՆԱՍ) ԿՀ-ի լեզվագոյաբանական ճանաչողական կառույց է, որը լեզվամտածական գործունեության արգասիք է, ավարտուն և ինքնաբավ լեզվական միավոր, որը կարող է լինել ինչպես ստորոգական, այնպես էլ ոչ ստորոգական: ՆԱՍ-ը բարդ կանխենթադրության նշան է, որի մասերի իմաստների հանրագումարը հավասար չէ դրա ամբողջական իմաստին՝ հիմնականխենթադրությո՛ւմ: Այն միշտ ավելի լայն և բազմաբովանդակ է, քան դրա բաղադրիչների իմաստները միասին վերցրած: ԿՀ-ում արտացոլվում է այդ ամբողջ ասույթը որպես այդպիսին և դրա հիմնականխենթադրությո՛ւր (օրինակ՝ «To be or not to be», «Ждем-с!»), «Մարդ կա՛ ելել է շալակն աշխարհի, Մարդ կա՛ աշխարհն է շալակած տանում...»):

Ուսումնասիրության արդյունքների հիմնա վրա նախադիպային իրողությունները խմբավորել ենք երեք խմբում՝ *համանախադիպային, հանրանախադիպային և ինքնանախադիպային*:

Այս բաժնում կատարած ուսումնասիրությունը բացահայտում է, որ նախադիպային իրողությունը կանխենթադրությունների համակազմ է, որոնցից տվյալ խոսույթ են ներմուծվում, նրանք, որոնք միտված են հասցեագրողի հաղորդակցա-



կան նպատակների իրագործմանը՝ վերաձվելով խոսույթի կանխենթադրույթներով: Հետագայում տեքստում դրանց հղելը ներկապակցում է տեքստը: 4.3. բաժինը նվիրված է ֆրեյմի քննությանը և նկարագրությանը՝ որպես ԿՀ-ի ավելի խոշոր կանխենթադրության միավոր: Ֆրեյմը մշակութապես, կանխատեսելի կանխենթադրության միավոր է, որի կառուցվածքն արտացոլում է խոսող անհատի աշխարհաճանաչողությունը: Մարդն աշխարհի պատկերն արտացոլում է ոչ թե առանձին-առանձին պատկերների ձևով՝ որպես գիտելիքներ և պատկերացումներ, այլ գիտակցական ավելի խոշոր կառուցվածքային միավորներով՝ ֆրեյմերով, որոնք թեմատիկ ամբողջություններ են: Յուրաքանչյուր ֆրեյմ ունի մեկ մակրոկանխենթադրույթ, այսինքն՝ իմաստային այն միջուկը, որը ստեղծում է այդ միավորը: Այդ իմաստային միջուկի շուրջ, ֆրեյմի կառուցվածքի մեջ կուտակվում է տեղեկություն, որն անմիջականորեն կապված է մակրոկանխենթադրույթի հետ: Այս տեսանկյունից կցանկանայինք հատուկ ընդգծել Մ. Մինսկու սահմանման<sup>55</sup> մեջ այն, որ *ֆրեյմում միջուկի շուրջը կուտակվող տեղեկությունը կանխատեսելի է տրվյալ մշակույթի համար*: Սա հենց կանխատեսելի, այսինքն՝ *կանխենթադրվող գիտելիքն է տրվյալ տիպային իրավիճակի մասին, որն արտացոլված է ֆրեյմում*: Այդ կանխատեսելիությունը պայմանավորված է մարդու գիտակցության մեջ գոյություն ունեցող խորքային իմաստային միավորներով՝ ֆրեյմերով, որը թեմատիկ կառույց է՝ համարված դրա հետ կապված գիտելիքներով և պատկերացումներով՝ կանխենթադրույթներով: Փաստորեն՝ ֆրեյմը կատարում է ԿՀ-ի կառուցվածքի կազմակերպման գործառույթ: Այսինքն՝ աշխարհի գիտակցական արտացոլումն ի սկզբանե կազմակերպված է, յուրաքանչյուր արտացոլվող միավոր, որը գիտակցության մեջ պետք է վերաձվի գիտելիքի կամ պատկերացման, իսկ հետագայում արդեն կանխենթադրույթի, արտացոլման առաջին իսկ պահից զուգորդային կապերի շնորհիվ մտնում է տարբեր ֆրեյմերի մեջ:

Երբ ֆրեյմը ներմուծվում է խոսույթ, խոսույթում դրա կանխենթադրույթներից առկայանում են նրանք, որոնք տեղին են այդտեղ և ուղղված են իրագործելու հեղինակի հաղորդակցական նպատակ(ներ)ը՝ այսպես ստեղծելով ամբողջական խոսույթ: Խոսույթի կանխենթադրույթների լեզվականացումը տարբեր լեզվաճանաչողական կառույցներով և համավերաբերությամբ դրանց հղելը ստեղ-

---

<sup>55</sup> Minsky M., A Framework for Representing Knowledge // Readings in Cognitive Science: A Perspective from Psychology and Artificial Intelligence, A. Collins, E. Smith (eds), San Mateo, California: Morgan Kaufmann Publishers, INC, 1988, p. 156.

ծում է ներկայակցված տեքստ:

4.4. բաժնում քննության առարկա ենք դարձրել ԿՀ-ի մեկ այլ կանխատեսելի, կանխենթադրության կառույց՝ կարծրատիպը, տեքստի կապակցման տեսանկյունից: Կարծրատիպին նվիրված հետազոտությունների մեծամասնությունում այն ընկալվում է հասարակական փոխազդեցության համատեքստում՝ որպես գործունեության, վարքի որոշակի կաղապար, որը կապված է փյալ իրավիճակում վարքի՝ որոշակի ազգահեն մարտավարության և ռազմավարության ընտրության հետ, որը պայմանավորված է որոշակի պահանջներով և շարժառիթներով<sup>66,57</sup>: Մեր կարծիքով կարծրատիպն աշխարհի որոշակի հատվածի արտացոլումն է, պատկերացումն է մեր գիտակցության մեջ՝ որպես այդ հատվածի փիլպային կաղապար և դրան բնորոշ (լեզվական) վարքականոն: Այսինքն՝ ի տարբերություն կարծրատիպի ընդունված սահմանման՝ մենք դիտարկում ենք այն և՛ որպես պատկերացում որոշակի իրողության մասին, և՛ որպես դրա (լեզվական) վարքականոն: Ասվածը կարելի է ավելի պարզ ներկայացնել հետևյալ կերպ. օրինակ՝ քաղաքական գործչի, ուսուցչի, դատավորի, տնօրենի և այլոց պատկերացումը մեր գիտակցության մեջ և այդ պատկերացումից բխող նրանց՝ կանխատեսելի (լեզվական) վարքականոնը: Այսինքն՝ թե ինչպես տվյալ հասարակական դերը կատարող, կարգավիճակն ունեցող անհատը պետք է իրեն դրսևորի տարբեր տիպային իրավիճակներում, այսինքն՝ մեր կողմից *ակնկալվող* նրա (լեզվական) վարքականոնը: *Ակնկալվող* մակդիրը ենթադրում է կանխենթադրվող, լեզվամշակութապես գիտելիք որոշակի տիպային իրավիճակներում հաղորդակցվելու համար:

#### **ԳՐՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ՏԵՔՍՏԻ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ ԿՀ-Ի ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ**

Սույն գլուխը, որն արձարծում է տեքստի կապակցումը ԿՀ-ի գոյաբանական բաղադրիչի միջոցով, բաղկացած է երկու բաժնից: Այս գլխում կատարած ուսումնասիրությունը բացահայտում է ԿՀ-ի գործառման օրինաչափություններն

---

<sup>66</sup> Рыжков В.А., Регулятивная функция стереотипов // Знаковые проблемы письменной коммуникации. Межвуз. сб. науч. трудов., Куйбышев: Пединститут, 1985. С. 15-20.

<sup>57</sup> Прохоров Ю.Е., Национальные социокультурные стереотипы речевого общения и их роль в обучении русскому языку иностранцев, изд. 5-е, М.: Издательство ЛКИ, 2008. – 224 с.

ամբողջական խոսույթ սերելու տեսակետից:

5.1. բաժինը լուսաբանում է տեքստի կաղապարումը ներքին խոսքի մակարդակում, որը ձևավորվում է ԿՀ-ի գոյաբանական ճանաչողական կառույցների միջոցով: Դրանք ծառայում են որպես մտածողության առանձին իմաստային միավորներ: Տեքստը՝ որպես լեզվի հնարավոր միավոր, գոյություն ունի հասցեագրողի գիտակցության մեջ մինչև դրա՝ խոսքում առկայացման փուլը, այսինքն՝ մինչև նյութական թաղանթ ստանալը: Ասույթի ծրագրավորման փուլում, որը մարդու մտածողության որոշակի փուլ է, տեքստը կառուցվում է առանձին ստորոգական միավորներից՝ որպես լեզվի ամենաբարձր մակարդակի վերացական միավոր: Այս փուլը հոգեբանության և լեզվաբանության մեջ պայմանականորեն կոչվում է *ներքին խոսք*: Անխոս, տեքստի կաղապարման փուլում ներքին խոսքի առանձնահատկությունները և ասույթի կառուցվածքը էապես տարբերվում են արտաքին խոսքի առանձնահատկություններից՝ բանավոր և գրավոր:

5.2. բաժնում նկարագրել ենք կապակցված տեքստը՝ որպես խոսույթի արգասիք, որը խոսող անհատի ԿՀ-ի գոյաբանական բաղադրիչի միջոցով ստեղծված ներքին խոսքի վերջնարդյունքն է: Սույն բաժինը նվիրված է նաև խոսույթի ամբողջականությանը և տեքստի ներկապակցմանը ԿՀ-ի միջոցով, որտեղ դիտարկել ենք նշյալ երևույթները ԿՀ-ի համալիր գործառման տեսանկյունից՝ թե՛ գոյաբանական, թե՛ լեզվական, որտեղ լեզվաճանաչողական կառույցները ուղղակիորեն սերում են ԿՀ-ի գոյաբանական ճանաչողական կառույցներից՝ որպես ֆրեյմային կանխենթադրույթներ և դրանց լեզվական նշույթներ:

## **ԳՆՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ. ՏԵՔՍՏԻ ՆԵՐԿԱՊԱԿՑՈՒՄԸ ԿՀ-Ի ԼԵԶՎԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ**

Սույն գրութն արծարծում է տեքստի ներկապակցման խնդիրը ԿՀ-ի լեզվաճանաչողական բաղադրիչի միջոցով: Այն բաղկացած է չորս բաժնից:

6.1. բաժինը ներկայացնում է տեքստի ներկապակցումը ԿՀ-ի լեզվաճանաչողական կառույցների միջոցով: Տեքստի ամբողջականությունը դրա մակրոկանխենթադրույթի առկայացումն է: Այսինքն՝ ինչպես որ խոսող անհատը ներքին խոսքի մակարդակում կաղապարում է տեքստի մակրոկանխենթադրույթը՝ թեման, այնպես էլ այն արտացոլվելու է տեքստում: Դրա մասին է վկայում այն, որ միևնույն թեմայի շուրջ երկու խոսող անհատ տարբեր տեքստեր են կառուցում: Փաստորեն՝ թեմայի առաջադրմամբ խոսող անհատն իր ԿՀ-ից ընտրում է որոշակի փոխկապակցված իրադարձություններ, վերաբերելիներ և օգտագոր-

ծում այնպիսի լեզվաճանաչողական կառույցներ, որոնք, ըստ իրեն, առավելապես պատշաճ կարտացոլեն դրանց բովանդակությունը: Վերլուծությունը բացահայտում է, որ այդ բառերն ու բառակապակցությունները՝ *լեզվաճանաչողական կառույցները* (շեղատառ հավելումը մերն է), ստեղծում են բառային շղթաներ<sup>58,59</sup>, որոնք տարածվում են ամբողջ տեքստով մեկ: Ամենահաճախեղ շղթաները ցույց են տալիս, թե ինչի մասին է տվյալ տեքստը<sup>60,61</sup> բացահայտում են դրա մակրոկանխենթադրույթը:

6.2. բաժնում քննության ենք առել տեքստի ներկապակցումը ԿՀ-ի միջոցով՝ հիմնված լեզվաճանաչողական կառույցների իմաստի ներառման հարաբերության վրա, որն իր հերթին հիմնված է ֆրեյմային իմաստաբանության վրա: Այսինքն՝ տեքստում կիրառված ցանկացած լեզվաճանաչողական կառույց ֆրեյմի որոշակի կանխենթադրույթի լեզվականացումն է, որը փաստորեն ներառում է ֆրեյմի մակրոկանխենթադրույթի իմաստը:

6.3 բաժնում դիտարկել ենք տեքստի ներկապակցումը լեզվաճանաչողական կառույցների իմաստի նույնության հարաբերության միջոցով: Իմաստի նույնությունն ասելով՝ նկատի ունենք, որ խոսույթի միևնույն ֆրեյմային կանխենթադրույթը մի քանի անգամ առկայանում է տեքստում՝ դառնալով խոսույթի կիզակետ միևնույն կամ մոտ իմաստ ունեցող լեզվաճանաչողական կառույցների միջոցով: Այս գործընթացը բացահայտում է հասցեագրողի հաղորդակցական նպատակ(ներ)ը՝ մատնանշելով նրա համար առանցքային որևէ խոսույթային կանխենթադրույթ: Այս գործընթացը կարող է առկայանալ երկու իմաստային հարաբերության միջոցով՝ լեզվաճանաչողական կառույցների կրկնության և հոմանիշության: Կրկնությունը ևս, բացի համավերաբերության միջոցով տեքստի ներկապակցման գործառույթ կատարելը, միտված է նաև թիրախավորելու խոսույթի որոշակի ֆրեյմային կանխենթադրույթ: Լեզվաճանաչողական կառույցների կրկնությամբ որոշակի ֆրեյմային կանխենթադրույթի թիրախավորումը բա-

---

<sup>58</sup> Fillmore Ch., Frame Semantics // Linguistics in the Morning Calm. Seoul: Hanshin Publishing Co., 1982. P. 111-137.

<sup>59</sup> Remus S., Lexical Chain Annotation Guidelines, 2012. Աղանց աղբյուր.  
<https://tinyurl.com/ybspujpt>: Բեռնվել է՝ 12.11.2016:

<sup>60</sup> Teich E. & Fankhauser P., Exploring Lexical Patterns in Text: Lexical Cohesion Analysis with Word Net // Interdisciplinary Studies on Information Structure, № 2, 2005. P. 129-145.

<sup>61</sup> Фивегер Д., Лингвистика текста в исследованиях ученых ГДР // Синтаксис текста. М.: Наука, 1979. С. 314-324

ցահայտում է նաև խոսող անհատի հաղորդակցական նպատակ(ներ)ը: Հոմանիշությունը ևս տեքստի ներկայակցումն իրագործում է լեզվաճանաչողական կառույցների և խոսույթի որոշակի ֆրեյմային կանխենթադրույթի համավերաբերության միջոցով: Սակայն այս դեպքում միևնույն խոսույթային կանխենթադրույթը առկայանում է տեքստում մի քանի անգամ հոմանիշ լեզվաճանաչողական կառույցների միջոցով՝ այդպիսով կիզակետ դարձնելով խոսույթի այդ կանխենթադրույթը և բացահայտելով հասցեագրողի հաղորդակցական ռազմավարությունը:

6.4. բաժինը լուսաբանում է տեքստի ներկայակցման մեխանիզմը լեզվաճանաչողական կառույցների իմաստի հակադրության միջոցով: Այս դեպքում ևս կապակցված տեքստի հիմքում ֆրեյմային իմաստաբանության հիման վրա կառուցված ամբողջական խոսույթն է: Ֆրեյմի կանխատեսելի կանխենթադրույթային կառուցվածքից հասցեագրողն ընտրում է այնպիսի կանխենթադրույթներ և լեզվականացնում դրանք այնպիսի լեզվաճանաչողական կառույցներով, որոնք իմաստով հակադիր են, հակասական, սակայն պահպանում են ֆրեյմի ընդհանուր մակրոկանխենթադրույթը և ուրեմն տեքստի ամբողջականությունը: Հականիշ լեզվաճանաչողական կառույցները բացահայտում են միևնույն ֆրեյմի կամ դրա որոշակի հատվածի հակադիր կողմեր՝ այդպիսով պահպանելով դրա արդիականությունը խոսույթում՝ որպես վերջինիս կիզակետ: Այս պարագայում տեքստը ներկայակցվում է հականիշ լեզվաճանաչողական կառույցների և խոսույթի որոշակի ֆրեյմի կամ դրա հատվածի կիզակետ կանխենթադրույթների համավերաբերության միջոցով:

#### **ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ. ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԻ՝ ՏԵՔՍՏԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՑՈՒՑԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

Սույն գլուխը նվիրված է կանխենթադրույթի՝ տեքստի կապակցման գործառույթին դրա ցուցչային հատկանիշի միջոցով: Այն բաղկացած է չորս բաժնից:

7.1. բաժնում քննության ենք առել ցուցայնությունը՝ որպես խոսույթի և տեքստի բաղադրիչների համավերաբերության միջոց և կանխենթադրույթի խթան:

7.2. բաժնում արծարծում ենք ցուցայնությունը՝ որպես խոսույթի և տեքստի համավերաբերություն և կանխենթադրույթի խթան՝ առաջարկելով գործառական հայեցակետ այդ գործընթացի շուրջ: Տեքստում ցուցչային լեզվաճանաչողական կառույցները իրականում վերաբերում են խոսույթի և տեքստի մի որևէ միավորի՝

նախանդամի, որը փոխարինվել է՝ այսպիսով առաջացնելով համավերաբերություն: Այս մասին Բ. Ջըթսը նշում է, որ «համավերաբերության առանձնահատկությունն այն է, որ այն պետք է կապված լինի մի որևէ համապատասխան նախանդամի»<sup>62</sup>:

Հատկանշական է, որ այսպիսի փոխարինումը կարող է տարբեր գործառույթներ իրականացնել՝ կախված դրա կիրառման գործաբանությունից: Անխոս, տեքստում ցուցային նշանների հիմնական գործառույթը *վերաբերական* գործառույթն է: Սակայն վերաբերական գործառույթը երբեք հանդես չի գալիս «մաքուր» ձևով: Պահպանելով վերաբերության ընդհանուր հատկանիշը՝ այն փոխակերպվում է՝ վերածվելով *համավերաբերական*, *ցուցային*, *փոխարինող*, *ցուցային-ներառական*, *բանաստեղծական* և *գրավելու* գործառույթների: Այս մասին Ի. Ռեզինը նշում է, որ փաստորեն ցուցային միավորների համավերաբերական ներուժը փոխում է դրանց կարգային հատկանիշը՝ ցուցային միավորը վերածելով տեքստակազմիչ միավորի<sup>63</sup>:

7.3. բաժինը նվիրված է տեքստի ներկայակցմանը եղանակավորող բառի կանխենթադրույթի միջոցով: Եղանակավորող բառի և դրա խոսույթային կանխենթադրույթի միջև առաջանում է համավերաբերություն լայն իմաստով, որն էլ ստեղծում է կապակցված տեքստ: Ի դեպ՝ քննվող բառերի խոսույթային կանխենթադրույթները սուբյեկտիվ, գնահատողական նշանակություններ են: Իմաստային տեսանկյունից նախադասության մեջ եղանակավորող բառերը մասնակցում են երկրորդային նախադրույթի արտահայտմանը<sup>64,65,66,67</sup>: Սա կանխենթադրվող նախադրույթ է: Ըստ այդմ՝ եղանակավորող բառերը, նախադասության ամբողջ իմաստից անկախ, ունեն իրենց սեփական, ինքնուրույն նշանակություն:

<sup>62</sup> Geurts B., Presuppositions and Anaphors in Attitude Contexts // Linguistics and Philosophy 21, Ludewig P. and Geurts B. (eds.), 1998, p. 546.

<sup>63</sup> Резин И.И., Некоторые средства выражения противопоставления по определенности в современном русском языке // Проблемы грамматического моделирования, М: Наука, 1973, с. 123.

<sup>64</sup> Панков Ф.И., О морфологии и синтаксисе модальных слов // Русский язык: исторические судьбы и современность, М.: Издательство МГУ, 2000, с. 171.

<sup>65</sup> Palmer F., Mood and Modality, Cambridge: CUP, 2001, p. 12.

<sup>66</sup> Nuyts J., The Modal Confusion: on Terminology and the Concepts Behind It // Modality. Studies in Form and Function, Alex Klinge and Henrik Høeg Müller (eds.), London: Equinox Publishing Ltd., 2005, p. 7.

<sup>67</sup> Boye K., Modality and the Concept of Force-Dynamic Potential // Modality. Studies in Form and Function, Alex Klinge and Henrik Høeg Müller (eds.), London: Equinox Publishing Ltd., 2005. P. 49-80.

նը, որը կատարում է մեթալեզվի գործառույթ: Այսինքն՝ սրանք միկրոտեքստի բովանդակությունը նկարագրող մեթատեքստային միջոցներ են, որոնց տարբեր դասակարգումներ կան գիտական գրականության մեջ: Անկախ դասակարգման հեղինակից՝ դրանց բոլորի հիմքը գործառական է, այսինքն՝ ինչ իմաստային մեկնություն է հավելում տվյալ եղանակավորող բառը միկրոտեքստի ամբողջ բովանդակությանը: Մեր կարծիքով, սրանք բոլորը մեթատեքստային միավորներ են, որոնց իմաստը ներակա, կանխենթադրվող նշանակություն է, որը բխում է հասցեագրողի խոսույթից: Վերաբերական գործառույթի միջոցով այն տեղայնացնում է իր կիզակետը և ապա ցուցային գործառույթի միջոցով թիրախավորում խոսույթի որոշակի հատված՝ իր կանխենթադրույթը, ապա այդ խոսույթային կանխենթադրույթը, որն այդ խոսույթում իր տեղային նշանակությունն է վերագրում/ հավելում է կիզակետին՝ առաջացնելով համավերաբերություն իր և կիզակետի միջև, որը, սակայն, ավանդական փոխարինման համավերաբերությունն է, այլ իմաստագործառական: Այսպես, եղանակավորող նշանը ներկապակցում է տեքստը ցուցային-վերաբերական-համավերաբերական վերաբերության ակտի միջոցով:

7.4. բաժինը լուսաբանում է տեքստի ներկապակցումը եղանակավորող բառ-մասնիկի կանխենթադրույթի միջոցով, որը խոսույթից բխող սուբյեկտիվ, գնահատողական նշանակություն է: Բառ-մասնիկը ստեղծում է համավերաբերություն տեքստի և խոսույթի համապատասխան հատվածների միջև՝ ներկապակցելով այն: Եղանակավորող բառ-մասնիկների ցուցային էությանը անդրադարձել են մի շարք լեզվաբաններ, որոնց տեսակետները կարող ենք ամփոփել այսպես. եղանակավորող բառ-մասնիկները կատարում են ցուցային գործառույթ, քանի որ միկրոտեքստում դրանք բացահայտում են հասցեագրողի՝ տվյալ իրողության մասին գիտելիքները՝ *կանխենթադրույթները* (հավելումը մերն է), և ցույց տալիս հասցեատիրոջը, թե որքանով է ինքը տեղեկացված դրա մասին<sup>68, 69, 70, 71</sup>: Հասցեագրողի՝ տվյալ իրողության մասին գիտելիքները, որոնք հա-

<sup>68</sup> Werner A., Leiss E. (eds.), *Modality and Theory of Mind Elements across Languages*, Berlin & Boston: Mouton de Gruyter, 2012. – 460 p.

<sup>69</sup> Frey W., Pittner K., *Zur Positionierung der Adverbiale im deutschen Mittelfeld // Linguistische Berichte*, № 176, 1998. P. 489-534.

<sup>70</sup> Cinque G., *Adverbs and Functional Heads. A Cross-linguistic Perspective*, 1st edition, New York: OUP, 1999. – 288 p.

<sup>71</sup> Zimmermann M., *Discourse Particle in the Left Periphery // Proceedings of the Dislocated Elements Workshop [ZAS Papers in Linguistics 35]*, B. Shaer, W. Frey & C. Maienborn (eds.),

սանելի են դառնում եղանակավորող բառ-մասնիկների միջոցով, ըստ մեզ՝ որոշակի միկրոտեքստի խոսույթն են կազմում: Եղանակավորող բառ-մասնիկների ցուցչային էության մեկ այլ մեկնություն նկարագրում է դրանք *ներդրված նախադրույթների* տեսանկյունից: Այսինքն՝ միկրոտեքստում եղանակավորող բառ-մասնիկը ներմուծում է արդեն արծարծված, հայտնի որևէ նախադրույթ<sup>72</sup>:

Եղանակավորող բառ-մասնիկների՝ տեքստի ներկապակցման մեր հայեցակետը գաղափարապես մոտ է վերոբերյալ երկու հայեցակետերին առ այն, որ միկրոտեքստում դրանք կատարում են ցուցչային և մեթատեքստային գործառույթ՝ հղելով խոսույթային որոշակի կանխենթադրույթ(ների)ի, որտեղից ստացված տեղեկությունը ծառայում է որպես բացատրական հենք միկրոտեքստի իմաստը մեկնելու համար: Այս գործընթացի վերջնարդյունքը կապակցված տեքստն է:

---

Berlin: ZAS, 2004, № 2. P. 254-566.

<sup>72</sup> Haegeman L., Conditional, Factives and the Left Periphery // *Lingua* 116, 2006. P. 1651-1669.



Ատենախոսության **եզրակացություններն** ամփոփված են հետևյալ կետերում.

1. Խոսույթը, որը կազմված է իրադրային համատեքստից՝ համաիրավիճակից, և տեքստից, ամփոփում է հաղորդակցվողների ԿՀ-երը և թույլ է տալիս նրանց պատշաճ հաղորդակցվել: ԿՀ-ը մարդու կենսագործունեության ընթացքում ձևավորված լեզվաճանաչողական գիտելիքների պաշարն է, որը պարունակում է բուն լեզվական, հոգեբանական, ազգային, մշակութային, հասարակական, գործաբանական, հաղորդակցական և այլ տեսակի ճանաչողական գիտելիքներ: Տեքստը խոսույթի լեզվականացումն է, սակայն խոսույթը կարող է ունենալ նաև չլեզվականացած տարբերակներ, որի ընկալումն ու մեկնումը հենվում է կանխենթադրույթի վրա: Լեզվամշակույթը սահմանում է որոշակի վերխոսույթ, որի ընտրությունը հասարակական մտքի արդյունք է: Այն կանխորոշում է խոսող անհատի ԿՀ-ի կառուցվածքն ու բովանդակությունը և սահմանում է դրա գործառման օրինաչափությունները:
2. Տեքստի հիմնական տարբերակիչ հատկանիշը դրա թեմատիկ, հաղորդակցական և կառուցվածքային ամբողջականությունն է: Տեքստն ունի երեք հիմնատարր՝ լեզվական, արտալեզվական և ճանաչողական: Տեքստը որոշակի իրավիճակի միջնորդված և լեզվականացած հակազդեցությունն/ արտացոլումն է: Այն որոշակի խթանիչ իրավիճակի միջնորդված, լեզվական հակազդեցությունն է: Միջնորդության խողովակը խոսող անհատի ԿՀ-ն է: Տեքստը ստորոգական միավոր է, սակայն դրա ստորոգման չափանիշը ոչ թե իրականությունն է, այլ խոսող անհատի ԿՀ-ը: Ուստի՝ տեքստի հիմնական տեքստակազմիչ կարգերը՝ ամբողջականությունը և ներկապակցումը, ճանաչողական են: Հետևաբար՝ տեքստի ներկապակցումն անմիջականորեն պայմանավորված է խոսույթի կանխենթադրութային՝ գիտելիքային համակազմից և հասցեագրողի գործաբանական ռազմավարությունից:
3. Կանխենթադրույթը խոսող անհատի նախադիպային, ճանաչողական, աշխարհի մասին հենքային գիտելիք կամ պատկերացում է և այն պատշաճ լեզվականացնելու գիտելիք, որը նրան թույլ է տալիս արդյունավետ հաղորդակցական գործունեություն իրականացնել՝ կառուցել հաղորդակցական իրավիճակի համատեքստին համապատասխան տեքստ և ընկալել հասցեատիրոջ տեքստը: Կանխենթադրույթի երեք հիմնական տեսակներն են՝

իմաստաբանական, գործաբանական և ճանաչողական: Ուստի՝ լեզվաբանության մեջ ընդունված կանխենթադրույթի մյուս տեսակներն այս երեքի տարբերակներն են կամ փոխակերպումները: Ըստ այդմ՝ լեզվական կանխենթադրույթը իմաստաբանականի փոխակերպում է, քանի որ սերում է ասույթի մակերեսային կառուցցից: Հաղորդակցականը գործաբանականի փոխակերպումն է, քանի որ սերում է արտալեզվական համատեքստային գիտելիքներից և պատկերացումներից: Գոյութենական կանխենթադրույթը ճանաչողականի տարատեսակ է, քանի որ այն արտացոլում է արտալեզվական հենքային գիտելիք: Հետևաբար՝ տեքստ կառուցելիս կանխենթադրույթը կատարում է երկու հիմնական գործառույթ՝ կապակցում է տեքստը (կառուցում է այն) խոսույթի մակարդակում հասցեագրողի տեսանկյունից և նպաստում դրա ընկալմանը հասցեատիրոջ տեսանկյունից:

4. Խոսող անհատը լեզվակիրն է, որն իր վրա է կրում տվյալ լեզվամշակույթի դրոշմը և դրա ներքո ձևավորում ճանաչողական գիտելիքների մի ամբողջություն: Ճանաչողական գիտելիքների այդ ամբողջությունը ԿՀ-ն է, որը խոսող անհատին թույլ է տալիս արդյունավետ լեզվամտածական գործունեություն իրականացնել: ԿՀ-ի առաջացման առաջին նախապայմանը մարդու գիտակցությունն է և դրա արտացոլական գործառույթը: Աշխարհի պատկերն իրականում նաև աշխարհի լեզվական պատկերն է: Հենց այս երկուսի համադրությունն է ձևավորում խոսող անհատին: Հետևաբար՝ մարդու գիտակցությունը և դրանում արտացոլված աշխարհի պատկերը, որն իր հերթին ԿՀ-ի ձևավորման հիմքն է, էթնոմշակութային են: Արտապատկերելով աշխարհը՝ այն արտացոլում է նաև այն բոլոր մշակութափոխան, արտալեզվական գործոնները, որոնք արդիական են տվյալ հասարակության համար: Հետևաբար՝ խոսող անհատի լեզվամտածողության արգասիքը՝ տեքստը, մշակութային տեսանկյունից նշույթավորված է: ԿՀ-ը եռակողմ գիտակցական-տեղեկատվական կառույց է՝ կազմված գիտելիքներից և պատկերացումներից: Գիտելիքն ու պատկերացումը իրական աշխարհի գիտակցական պատկերներն են, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել: ԿՀ-ի երեք մակարդակներն են ԱԿՀ-ը, ԸԿՀ-ը և ԽԿՀ-ը: ԿՀ-ի բաղադրիչ միավորները՝ իմաստային միջուկները, մեր գիտակցության մեջ պահպանվում են ճանաչողական կառույցների տեսքով: Նախադիպային իրողությունը մարդու գիտակցության մեջ արտացոլված որոշակի երևույթի մտավոր արտացոլումն է, որը հանդես է գալիս որպես հիմնականխենթադ-

րոյթ, ձևանմուշ՝ դրան հղելիս որոշակի կանխենթադրվող անփոփոխակա-  
յին իմաստներ ստանալու, տեքստը կառուցելու և այն պատշաճ ընկալելու  
համար: Արձանագրել ենք նախադիպային իրողության չորս տեսակ՝ նա-  
խադիպային անուն (ՆԱ), նախադիպային տեքստ (ՆՏ), նախադիպային  
իրավիճակ (ՆԻ) և նախադիպային ասույթ (ՆԱՍ): Սրանցից յուրաքանչյուրը  
հանդես է գալիս որպես հիմնականխենթադրույթ, և այն տեքստում կիրա-  
ռելիս խոսույթ է ներմուծում դրա հիմքում ընկած այն կանխենթադրույթ-  
(ներ)ը, որը/ որոնք տեղին է/ են տվյալ խոսույթում և ուղղված է/ են հասցե-  
ագրողի գործաբանական ռազմավարության իրագործմանը: Նախադիպա-  
յին իրողություններից ՆԱ-ը և ՆԱՍ-ը լեզվական են, մինչդեռ ՆՏ-ը և ՆԻ-ը՝  
ոչ, սակայն դրանք կարող են լեզվականանալ: Նախադիպային իրողու-  
թյուններից յուրաքանչյուրը կարող է հղել մեկ այլ նախադիպային իրողու-  
թյան՝ հատկապես լեզվականը ոչ լեզվականին: Նախադիպային իրողություն-  
ները կանխենթադրութային, հանրամշակութահեն երևույթներ են: Ֆրեյմը  
ԿՀ-ի մեկ այլ կանխենթադրութային, կառուցվածքային միավոր է: Այն իր  
բովանդակությամբ ավելի բարդ կանխենթադրութային կառույց է, քան նա-  
խադիպային իրողությունը, քանի որ կարող է պարունակել այն որպես  
կառուցվածքային տարր: Ֆրեյմն աշխարհի որոշակի իրողության և դրա  
հետ կապված կանխենթադրվող, անփոփոխակային զուգորդումների գի-  
տակցական պատկերն է: Այդ զուգորդումներն էությամբ հանրամշակութա-  
յին են և այդ տեսանկյունից նշույթավորված են: Ֆրեյմը պարունակում է աշ-  
խարհի մի որևէ հատվածի ամբողջական գիտակցական պատկերը, որը  
տեքստում օգտագործելիս խոսույթ է ներմուծում այդ ամբողջ հանրամշա-  
կութահեն գիտելիքը՝ կանխենթադրութների համակազմը՝ ներակա կա-  
պակցելով այն: Միջմշակութային շփումները կարող են հանգեցնել ֆրեյմի  
կանխենթադրութային կառուցվածքի փոփոխության՝ թե՛ գոյաբանական,  
թե՛ լեզվական բաղադրիչներում: Հետևաբար՝ միջմշակութային հաղորդակ-  
ցական իրավիճակում թիրախավորվում և համատեքստի մաս են կազմում  
այն կանխենթադրութները և դրանք լեզվականացնող համապատասխան  
լեզվաճանաչողական կառույցները, որոնք արդիական են տվյալ հաղոր-  
դակցական համատեքստում: Կարծրատիպը ԿՀ-ի մեկ այլ կանխենթադրու-  
թային կառույց է, որը ներառում է նախորդ երկուսը՝ նախադիպային իր-  
ողությունը և ֆրեյմը: Այն ոչ միայն աշխարհի որոշակի հատվածի գիտակցա-  
կան արտացոլումն է, այլև դրա կանխենթադրվող վարքականոնի կաղա-

պարը: Կարծրատիպը նույնպես կանխենթադրությանին, հանրամշակութային իրողություն է: Այն կանխորոշում է, թե ինչպես պետք է կառուցվի և լեզվականանա խոսույթը:

5. Տեքստի կառուցումը և ընկալումը պայմանավորված է խոսող անհատի ԿՀ-ի բովանդակությամբ: Նախքան լեզվականանալը տեքստը ենթարկվում է մտավոր կաղապարման խոսող անհատի գիտակցության մեջ: Տեքստի գիտակցական կաղապարը կոչվում է ներքին խոսք: Ներքին խոսքը խտացած է և հատույթավոր՝ ի տարբերություն արտաքին խոսքի՝ բուն տեքստի, որն ունի ծավալվող, գծային էություն: Ներքին խոսքի հատույթավորությունը պայմանավորված է նրանով, որ խոսող անհատի կողմից դրանում ներդրված տեղեկությունը լեզվական չէ: Այն հասցեագրողի ԿՀ-ից վերցված, նրա հաղորդակցական մտահղացման իրագործմանն ուղղված տեղեկություն է՝ կանխենթադրույթների համակազմ, որի միջոցով նա նպատակ ունի առկայացնել հաղորդման մակրոկանխենթադրույթը: Տեքստի կաղապարման նախնական փուլում՝ թեման (մակրոկանխենթադրույթը) ընտրելիս, խոսող անհատը կանխորոշում է տեքստի ամբողջականությունը և ներկայակցումը: Ապա, ելնելով իր հաղորդակցական մտահղացումից և մակրոկանխենթադրույթից, իր ԿՀ-ից ընտրում է այն գոյաբանական ճանաչողական կառույցները՝ ֆրեյմերը և կարծրատիպերը, որոնք խոսույթ են ձևավորելու: Խոսույթը և տեքստը՝ որպես խոսող անհատի ԿՀ-ի արգասիք, կրում են ազգային-մշակութային դրոշմ: Հետևաբար՝ տեքստի հիմքը կազմող ներքին խոսքն ի սկզբանե հանրամշակութահեն է, քանի որ այն արտացոլում է խոսող անհատի ԿՀ-ը, որն իր հերթին ձևավորվել է որոշակի ազգամշակույթի ներքո՝ որպես դրա կրող: Քանի որ ներքին խոսքը կազմող և կառուցվող տեքստի հիմքում ընկած ֆրեյմ(եր)ը և կարծրատիպ(եր)ը մշակութահեն են, դրանք տեքստի բովանդակության ընկալումը սահմանափակում են հիմնականում լեզվակիրների շրջանակով:

6. Մարդու լեզվամտածողությունը հիմնված է ֆրեյմային, կարծրատիպային իմաստաբանության վրա, քանի որ ֆրեյմը և կարծրատիպը խոսող անհատի ԿՀ-ի գոյաբանական կառուցվածքային բաղադրիչներից են: Խոսող անհատի ԿՀ-ի գոյաբանական ճանաչողական կառույցները տեքստում կարող են լեզվականանալ մի շարք լեզվաճանաչողական կառույցների միջոցով, որոնք հիմնականում հիմնված են իմաստի ներառման, կրկնության, նույնության և հակադրության հարաբերությունների վրա: Դրանք առկայանում

են լեզվաճանաչողական կառույցների կրկնությամբ, հոմանիշությամբ և հականիշությամբ: Ելնելով իր մտահղացումից՝ խոսող անհատն իր ԿՀ-ի նշյալ լեզվաճանաչողական կառույցներից ընտրություն է կատարում տեքստը ներկայակցելու համար: Իմաստի կրկնությունը ներկայակցում է տեքստի կամ բազմաստորոգական միավորի հատվածները միևնույն կամ համարժեք լեզվաճանաչողական կառույցների կիրառությամբ: Կրկնվող իմաստը հարաբերակից միավորների համավերաբերության պայմանն է, որն ընկած է տեքստի բառային ներկայակցման հիմքում: Կրկնությունը կանխենթադրվող իմաստի կրկնությունն է, որը հարաբերակից միավորների իմաստային հարաբերակցման նախապայմանն է: Տեքստում ընդհանուր իմաստի առկայացման միջոցներից մեկը այն համարժեք լեզվաճանաչողական կառույցների օգտագործումն է, որոնք կապված են հարացուցային հարաբերություններով:

7. Լեզվաճանաչողական կառույցի համավերաբերական ներունակությունը դրսևորվում է տեքստում դրա առկայացման պահին, որը պայմանավորված է դրանով լեզվականացած իրողության այն գոյաբանական հատկանիշներով և հարաբերություններով, որոնք տեղ են գտել տվյալ խոսույթում: Ըստ այդմ՝ երբ տեքստում հստականում է լեզվական նշանի վերաբերության շրջանակը, այն սկսում է գործառել որպես տեքստի բառային ներկայակցման միջոց: Լեզվական միավորի իմաստի կրկնությունը՝ որպես վերաբերության նախապայման, իրագործվում է վերաբերության հետևյալ հարաբերություններով՝ իմաստի նույնություն (կրկնություններ, հոմանիշներ), իմաստի ներառում (սեռատեսակային հարաբերություններ), իմաստի հակադրություն (հականիշություն):
8. Բազմաստորոգական միավորի իմաստակառուցվածքային ներկայակցումը պահանջում է դրա ստորոգական հատվածներում խոսույթի համապատասխան ֆրեյմային, կարծրատիպային կանխենթադրույթների առկայացման հաջորդականություն: Ըստ այդմ՝ ֆրեյմի մակրոկանխենթադրույթը՝ դրա ամենաընդհանուր և ամենաչեզոք իմաստային բաղադրիչը, պետք է լեզվականանա բազմաստորոգական կառույցի առաջին ստորոգական հատվածում: Այն կանխորոշում է այն հնարավոր լեզվաճանաչողական կառույց(ներ)ի շրջանակը, որոնք կարող են առկայանալ բազմաստորոգական կառույցին հաջորդող ստորոգական հատված(ներ)ում: Փաստորեն՝ բազմաստորոգական միավորի իմաստակառուցվածքային ներկայակցումը հեն-

վում է խոսույթում առկայացած որոշակի ֆրեյմի, կարծրատիպի կանխենթադրության բովանդակության վրա: Ֆրեյմի և կարծրատիպի մակրոկանխենթադրույթը լեզվականացնող ելակետային միավորի և այդ թեմայի առանձնահատկությունները լեզվականացնող այլ միավորների միջև կարող են լինել հոմանիշային, հականիշային, սեռատեսակային հարաբերություններ: Դրանք այդ ֆրեյմի և կարծրատիպի կանխենթադրույթները լեզվականացնող միևնույն բառիմաստային դաշտի միավորներ են: Որպես կանոն, վերոնշյալ իմաստային հարաբերությունները ոչ միայն ներկապակցում են տեքստը, այլև ապահովում խոսույթի ամբողջականությունը ֆրեյմային իմաստաբանության տեսանկյունից:

9. Ցուցանությունն իր տարբեր տարատեսակներով կատարում է տեքստի ներկապակցման գործառույթ միկրոտեքստի համապատասխան հատվածներ (ցուցչային նշանը նախանդամին) և տեքստի միավորները խոսույթի համապատասխան հատվածներին համավերաբերելու միջոցով: Նախանդամի իմաստը ցուցչային նշանի համար կանխենթադրույթ է՝ կանխավ հայտնի գիտելիք: Ցուցչային նշանները ներկապակցում են տեքստը համավերաբերության միջոցով՝ շնորհիվ տարբեր գործառույթների (համավերաբերական, փոխարինող, ցուցչային, ցուցչային-ներառական, բանաստեղծական և գրավելու): Բացի այդ, նշյալ գործառույթներին զուգահեռ՝ գործառում է ցուցչային-համավերաբերական գործառույթը՝ որպես մետագործառույթ: Որպես ցուցչային նշան՝ եղանակավորող միավորը կատարում է տեքստի ներկապակցման գործառույթ տեքստի որոշակի միավորներ խոսույթի համապատասխան հատվածներին հղելու և դրա միջոցով հասցեագրողի սուբյեկտիվ վերաբերմունքը ասույթի բովանդակությանը կամ դրա որոշակի հատվածի նկատմամբ արտահայտելու միջոցով: Այսպիսով, եղանակավորող բառը տեքստի ներկապակցման գործառույթը կատարում է համավերաբերության միջոցով, իսկ համավերաբերությունը ենթադրում է կանխավ հայտնի գիտելիք՝ կանխենթադրույթ, որին հղելով՝ տեքստը ներկապակցվում է՝ դառնալով ամբողջական: Եղանակավորող միավորները մետատեքստային են, որոնք միկրոտեքստը կապակցելուց բացի, հավելյալ, սուբյեկտիվ, կանխենթադրվող նշանակություն են հաղորդում դրան՝ գործառելով որպես տեքստի մետակազմակերպիչներ: Եղանակավորող միավորները տեքստը ներկապակցում են հետևյալ ցուցչային-համավերաբերական փուլային գործողությունների միջոցով՝ {տեքստ →/← տեքստ = կիզակետի

տեղայնացում] → [տեքստ → խոսույթ = եղանակավորող բառի կանխենթադրույթի թիրախավորում] ← [[խոսույթ → տեքստ = եղանակավորող բառի նշանակության վերագրում/ հավելում կիզակետին]]: Բառ-մասնիկը տարբեր խոսքի մասերից (հիմնականում մակբայներից) առաջացած, բառային իմաստից գրեթե զուրկ մեկ այլ ցուցչային միավոր է, որը ձեռք է բերում նշանակություն միայն խոսույթում: Բառ-մասնիկների նշանակությունը սերում է նախանդամի իմաստից՝ որպես խոսույթային կանխենթադրույթ, որին հավելվում է որոշակի սուբյեկտիվ գնահատական՝ բառ-մասնիկի ընդհանրական բառային իմաստը, և վերագրվում դրա կիզակետին: Բառ-մասնիկները նույնպես կատարում են տեքստի ներկայակցման գործառույթ՝ ցուցչային-համավերաբերական գործառույթի միջոցով: Համավերաբերությունը ենթադրում է նախանդամի, այսինքն՝ կանխավ հայտնի գիտելիքի՝ կանխենթադրույթի գոյություն: Բառ-մասնիկները անփոփոխակային ցուցչային-համավերաբերական գործողության միջոցով ձեռք են բերում փոփոխական արժեք միայն խոսույթում: Այդ փոփոխական արժեքը խոսույթային կանխենթադրույթ է, որը գործառում է որպես դրանց նշանակություն միայն տվյալ միկրոտեքստում: Բառ-մասնիկների խոսույթային կանխենթադրույթը ներակա կապ է ստեղծում միկրոտեքստի և խոսույթի համապատասխան հատվածների միջև՝ կապակցելով տեքստը դրա խորքային և մակերեսային կառույցներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ **հրատարակումներում**.

1. Թովմասյան Հ. Ժ., Deixis as Text/ Discourse Anaphora and Presupposition Trigger // Иностранные языки в высшей школе (научный журнал). Выпуск 1(20), Рязань, 2012, с. 32-39.
2. Թովմասյան Հ. Ժ., Text (Context) Comprehension and Structuring via Different Types of Presuppositions // Armenian Folia Anglistica, International Journal of English Studies, 1-2(10)/2012-Yerevan, Լեզվական հորիզոն, ք. 26-34.
3. Թովմասյան Հ. Ժ., Context Presupposition Set as a Premise for Text Cohesion // Иностранные языки в высшей школе (научный журнал). Выпуск 1(28), Рязань, 2014, с. 52-58.
4. Թովմասյան Հ. Ժ., The Speaking Individual's Presupposition Base as a Reflection of the Picture of the World and the Linguistic Picture of the World // Armenian Folia Anglistica, International Journal of English Studies, 2(14)/2015-Yerevan, Yerevan State University Press, ք. 33-42.
5. Թովմասյան Հ. Ժ., Կանխենթադրության հենքի մակարդակները և տեղեկատվական միավորների կրիչները // «Բանբեր՝ Բանասիրություն. Լեզվաբանություն» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(36), Երևան «Լինգվա», 2016, էջ 200-209:
6. Թովմասյան Հ. Ժ., Խոսող անհատի գաղափարը և նրա լեզվագիտակցությունը որպես հաղորդակցվելու հիմք // «Հայագիտության հարցեր» հանդես 1 (7), ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Երևան «ԵՊՀ հրատարակչություն», 2016, էջ 168-179:
7. Թովմասյան Հ. Ժ., Գիտելիքը և պատկերացումը՝ որպես կանխենթադրության հենքի կառուցվածքային միավորներ // «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա, «Լուսակն» հրատարակչություն, Երևան 2016, էջ 38-46:
8. Թովմասյան Հ. Ժ., Նախադիպային իրողությունները՝ որպես կանխենթադ-



րութային հենքի բաղադրիչներ // «Բանբեր՝ Բանասիրություն. Լեզվաբանություն» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանության համալսարանի 1(38), Երևան «Լինգվա», 2016, էջ 237-252:

9. Թովմասյան Հ. Ժ., Կանխենթադրութային հենքի ձևավորման հասարակական-մշակութային նախադրյալները // «Գիտական տեղեկագիր» (Հումանիտար գիտություններ) № 3-4 (28-29), Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2016, էջ 133-140:
10. Թովմասյան Հ. Ժ., On Text Coherence Via Precedent-Phenomena-Based Presuppositions // “Language and Culture”, Scientific Peer Reviewed Journal, № 16, Foundation for Development of Art and Pedagogical Sciences, Kutaisi, Georgia, 2016, p. 90-99.
11. Թովմասյան Հ. Ժ., Տեքստի ներկապակցումը և ամբողջականությունը կանխենթադրութային հենքի միջոցով // «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդես 2 (15), ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2016, էջ 61-68:
12. Թովմասյան Հ. Ժ., On Text Coherence via Frame-Based Presuppositions // Armenian Folia Anglistica, International Journal of English Studies, 2(16)/2016-Yerevan, Yerevan State University Press, p. 49-63.
13. Թովմասյան Հ. Ժ., On Text Coherence via Frame-Based and Stereotype-Based Presuppositions // *in esse: English Studies in Albania*, Journal of the Albanian Society for the Study of English (ASSE), 2016, 7.1, printed by Studio Sai, Vlorë, Albania, p. 7-31.
14. Թովմասյան Հ. Ժ., On Mental Structuring of the Text via the Presupposition Base // Вестник Павлодарского государственного университета имени С. Торайгырова (ПГУ), Филологическая серия, Павлодар, Казахстан, Издательство «Кереку», № 1, 2017, с. 355-365.
15. Թովմասյան Հ. Ժ., Եղանակավորող բառերի՝ տեքստի ներկապակցման գործառույթը դրանց հիմքում ընկած կանխենթադրույթների միջոցով // «Բանբեր՝ Բանասիրություն. Լեզվաբանություն» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանության համալսարանի 1(40), Երևան «Լինգվա», 2017, էջ 208-223:
16. Թովմասյան Հ. Ժ., Մասնիկների՝ տեքստի ներկապակցման գործառույթը

դրանց հիմքում ընկած կանխենթադրույթների միջոցով // «Բանբեր՝ Բանասիրություն. Լեզվաբանություն» Երևանի Վ. Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(40), Երևան «Լինգվա», 2017, էջ 224-235:

17. Թովմասյան Հ. Ժ., Տեքստի ներկապակցումը կանխենթադրույթային հենքի միջոցով՝ հիմնված բառային ներառման հարաբերության վրա // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, ԵՊՀ գիտական հանդես, 1(22), Երևան, 2017, էջ 96-109:
18. Թովմասյան Հ. Ժ., Տեքստի բառային ներկապակցումը եվ ամբողջականությունը կանխենթադրույթային հենքի միջոցով // Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Արվեստի ինստիտուտ, 2(71), «Ասողիկ» հրատ., Երևան, 2017, էջ 72-81:
19. Թովմասյան Հ. Ժ., Տեքստի ներկապակցումը կանխենթադրույթային հենքի միջոցով՝ հիմնված բառային միավորների կրկնության վրա // Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Արվեստի ինստիտուտ, 2(71), «Ասողիկ» հրատ., Երևան, 2017, էջ 63-71:
20. Թովմասյան Հ. Ժ., Text Cohesion via the Presupposition Base Realized through Antonymy of Language Units // Language and Culture, academic periodical journal, № 9, Tomsk, Russia, National Research Tomsk State University Publishing, 2017, p. 70-84.
21. Թովմասյան Հ. Ժ., Text Cohesion via the Presupposition Base Realized through Synonymy of Lexical Units // Austrian Journal of Humanities and Social Sciences, Austria, Vienna, «East West» Association for Advanced Studies and Higher Education GmbH, 2017, № 3-4, p. 9-15.
22. Թովմասյան Հ. Ժ., Ցուցայնությունը՝ որպես խոսույթի և տեքստի բաղադրիչների համավերաբերության միջոց և կանխենթադրույթի խթան // Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Արվեստի ինստիտուտ, 3(72), «Ասողիկ» հրատ., Երևան, 2017, էջ 77-85:

**ГРАНУШ ЖОРАЕВНА ТОВМАСЯН**  
**ЛИНГВОКОГНИТИВНЫЙ АСПЕКТ ПРЕСУППОЗИЦИИ КАК СРЕДСТВА**  
**СВЯЗНОСТИ ТЕКСТА**

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.02 - «Общее и сравнительное языкознание»

Защита состоится 4 июня 2018 года в 15:00 на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15)

**РЕЗЮМЕ**

Настоящая диссертация посвящена исследованию пресуппозиции как средства связности текста в лингвокогнитивном аспекте.

**Актуальность** диссертации определяется важностью и необходимостью исследования лингвокогнитивных аспектов пресуппозиции в ее текстообразующей функции. Необходимость изучения содержания и функционирования пресуппозиционной базы (ПБ) как средства связности текста требует разработки новой исследовательской концепции, а также осуществить глубинную и скрупулезную исследовательскую работу.

**Научная новизна** исследования заключается в попытке объяснить связность текста посредством пресуппозиции, в результате чего предлагается новая концепция связности текста, рассматривая текст как непосредственный результат содержания и функционирования ПБ человека.

**Методы исследования** включают лингвистический метод обозрения, целью которого является выявление особенностей изучаемых явлений; выборка, разработка и изучение материала по структурным и содержательным признакам; интроспекция как лингвистический эксперимент; методы сравнительного анализа; когнитивно-дискурсивный метод изучения смысла.

**Теоретическая значимость** исследования заключается в разработке новой концепции связности текста посредством пресуппозиции, которая уникальна в лингвистике по сей день. Она предлагает антропоцентрический подход к изучению связности и целостности текста, которая основывается на содержании и функционировании ПБ говорящей личности.

**Практическая ценность** диссертации заключается в том, что подходы и результаты разработанные на протяжении всего исследования могут быть впоследствии применены не только исследователями текста и дискурса, но и

психологами, когнитологами и культурологами.

**В первой главе** делается попытка мультидисциплинарного исследования текста и дискурса с позиций пресуппозиций и ПБ-ы в целом. И так, дискурс дву-плановое явление (языковое и неязыковое в широком смысле, как совокупность когнитивных знаний - пресуппозиций), когнитивный речемыслительный процесс и его продукт в виде текста(ов). Текст есть предикативное, воспроизводимое языковое явление, которое кодирует и воспроизводит всю ПБ-у человека.

**Во второй главе** исследуется пресуппозиция как явление и связность текста посредством различных ее типов. Наряду со всеми известными типами пресуппозиций, выделяются такие ее основные типы как семантическая, прагматическая и когнитивная, из которых основополагающей для данной работы является когнитивная пресуппозиция.

**В третьей главе** затрагиваются вопросы говорящей личности, ее ПБ-ы и их комплексного изучения. В процессе социализации человек превращается в говорящую личность, в результате чего у него формируется обязательный для речемышления продукт – ПБ.

**Четвертая глава** посвящена изучению и описанию структурных и функциональных особенностей ПБ-ы.

**В пятой главе** затрагивается проблема связности текста посредством феноменологической составляющей ПБ-ы, в основе которой лежит пресуппозиционное начало стереотипо-фреймовой семантики дискурса и текста.

**В шестой главе** затрагивается проблема связности текста посредством лингвокогнитивной составляющей ПБ-ы, в основе которой лежат смысловые отношения лингвокогнитивных единиц языка, основанные на пресуппозиционной стереотипо-фреймовой семантике как инклюзивность, идентичность и оппозиция.

**Седьмая глава** посвящена текстосвязующей функции пресуппозиции посредством ее дейктического признака, основанный на цепной, анафорической отсылке от лингвокогнитивной, дейктической единицы текста к ее антецеденту/фокусу, от антецедента/ фокуса к ситуативному контексту и соответствующей части дискурса. Данная цепная анафорическая процедура локализует конкретную пресуппозицию в дискурсе, и в ситуативном контексте соответственно, таким образом переписывая данную дискурсивную пресуппозицию как значение дейктического знака.

**HRANUSH ZHORA TOVMASYAN**  
**LINGVO-COGNITIVE ASPECT OF PRESUPPOSITION AS A TEXT COHESION**  
**MEANS**

Thesis for the degree of Doctor of Philological Sciences in 10.02.02 – “General and Comparative Linguistics”

The defense of the thesis will be held on 4 June, 2018 at 15.00, at the session of the Specialised Council of Linguistics 019 of SCC RA in the Language Institute after H. Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, G. Lusavorich Str. 15).

**SUMMARY**

The present dissertation is an investigation of the lingvo-cognitive aspect of presupposition as a text structuring means.

The **actuality** of the dissertation is determined by the importance and necessity of research of the lingvo-cognitive aspect of presupposition in its text structuring function. There is also a need to research the operation of consciousness and the presupposition base (PB) as a text structuring means which requires elaboration of a new research conception, as well as carrying out of a profound and sophisticated research.

**The scientific novelty** of the research lies in an attempt to explicate text cohesion and coherence by means of presupposition, which yields a new conception of text cohesion and coherence, viewing text as an immediate product of the content and operation of the PB of the speaking individual.

**The research methods** include the linguistic method of observation aiming to identify the features of the phenomena under study; sampling, elaboration and study of the material according to structural and content features; introspection as a linguistic experiment; methods of comparative analysis; cognitive-discursive method of content research.

**The theoretical significance** of the research lies in the development of a new conception of text coherence and cohesion through presupposition which is unique in linguistics to this day. It suggests an anthropocentric approach to the study of text cohesion and coherence based on the content and functioning of the PB of the speaking individual.

**The practical value** of the dissertation lies in the fact that the approaches and results developed throughout the study can later be applied not only by text and discourse researchers, but also by psychologists, cognitive scientists and

culturologists.

**In the first chapter** an attempt is made to carry out a multidisciplinary research of the text and discourse from the standpoint of the presupposition and the PB on the whole. Thus, discourse is a biplane phenomenon (linguistic and non linguistic in the broadest sense of the word, as a sum of cognitive knowledge – presuppositions), a cognitive linguo-mental process and its outcome by way of a text(s). In its turn, the text is a predicative, reproducible linguistic phenomenon that codes and actualises the whole of the PB of the speaking individual.

**The second chapter** elaborates on presupposition as a phenomenon, as well as text cohesion and coherence through its various types. Alongside all its known types, semantic, pragmatic and cognitive presuppositions are considered as basic of which the cognitive one is taken as fundamental for the present study.

**The third chapter** deals with the concept of the speaking individual, his/ her PB and their comprehensive study. One becomes a speaking individual as a result of his/ her socialisation, the outcome of which is the PB – mandatory for linguo-mental processes.

**The fourth chapter** is devoted to the study and description of the structural and functional characteristics of the PB.

**The fifth chapter** addresses the problem of text coherence through the phenomenological component of the PB in the basis of which lies the presuppositional nature of stereotype-frame semantics of discourse and text.

**The sixth chapter** addresses the problem of text coherence through the lingvo-cognitive component of the PB in the basis of which lie such semantic relations of linguo-cognitive units of the language as inclusiveness, sameness and opposition, all of which are based on the presuppositional stereotype-frame semantics.

**The seventh chapter** is devoted to the study of the text-structuring function of presupposition by means of its deictic characteristic realised through the chain, anaphoric reference from the linguo-cognitive, deictic sign of the text to its antecedent/ focus, from the antecedent/ focus to the situational context and the corresponding part of the discourse. The given chain, anaphoric reference localises a certain discourse presupposition, thus assigning the presupposition in question to the deictic sign as its meaning. The given chain, referential procedure secures text cohesion and coherence.